

ԿՈՄՈՒՆԱԼ - ԷՆԵՐԳԵՏԻԿ ՑԱՆՑԵՐՈՒՄ ԽՈՇՈՐ ՎԹԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ  
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԾԵԼՈՒ ԴԼԱՆ (ՋՈՒՐ, ԳԱԶ, ԿԱՊ, ՏՐԱՆՄՊՈՐՏ,  
ԷԼԵԿՏՐԱԵՆԹԱԿԱՑԱՆ ԵՎ ԱՅԼՆ)

**1. Փոխհամագործակցություն (նաև հարևան մարզերի հետ)**

Արտակարգ իրավիճակների կանխարգելման և դրանց հետևանքների նվազեցման գործընթացում ժամանակին ու լայնածավալ տեղեկատվության հաղորդումը բնակչությանը և շահագրգիռ մարմիններին կարևոր նշանակություն ունի, հատկապես կոմունալ - էներգետիկ ցանցերում խոշոր վթարների դեպքում:

Էներգետիկ անվտանգությունը բնութագրող սպառնալիքները բաժանվում են տնտեսական, սոցիալ-քաղաքական, տեխնաժին և բնածին սպառնալիքների: Ներկայումս գոյություն ունեն էներգետիկ անվտանգության տնտեսական տարբեր ցուցանիշներ (հասանելիությունը, մատչելիությունը, առողջության անվտանգության ապահովումը), ինչպես նաև էներգետիկ անվտանգության բնապահպանական ցուցիչներ (կլիմայի փոփոխությունը, օդի, ջրի, հողի որակը, անտառները, պինդ թափոնների վերամշակումն ու կառավարումը և այլն), որոնք միտում ունեն ապահովելու ոլորտի կայուն և անխափան աշխատանքը:

Կոմունալ - էներգետիկ ցանցերում խոշոր վթարի դեպքում պահպանվում է կապը ՀՀ պաշտպանության նախարարության զինվորական մասերի, ոստիկանության և ազգային անվտանգության ծառայությունների տարածքային մարմինների հետ:

1) Ընդհանուր վթարի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների համար ներգրավվում են հետևյալ ուժերը և միջոցները՝

ա. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Կոտայքի մարզային փորձագիտական կենտրոնը:

բ. Տարահանման միջոցառումների տրանսպորտային ապահովման համար՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության պատասխանատուն տարահանման գործում ներգրավում է անհրաժեշտ քանակի միկրոավտոբուսներ:

2) Ըստ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության ներկայացրած հայտի՝ խոշոր վթարի գոտում գտնվող բնակչությանը անհրաժեշտ դեղորայքի քանակությունը ստանում է ՀՀ ԱԻՆ-ից և տրամադրում վթարի գոտում գտնվող բուժօգնության կետերին, որոնք էլ իրենց հերթին կատարում են բաշխում:

3) Կոմունալ - էներգետիկ ցանցերում խոշոր վթարի դեպքում ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալտնտեսական զարգացման վարչությունն՝ ըստ իր կողմից ներկայացված հայտերի ՀՀ ԱԻՆ-ից ստանում է վառելիքաքաղցրային նյութեր՝ տարահանման միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցներն ապահովելու նպատակով:

4) Օգնության ժամանած փրկարարական կամ այլ հատուկ ուժերի խնդրադրումն իրականացվում է ԿՄՓՎ-ի կողմից:

Անհրաժեշտության դեպքում մարզում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների փոխգործողությունները իրականացվում են նաև հարևան մարզերի համապատասխան ծառայությունների ուժերի հետ: Հարևան մարզերի կողմից ուժեր և միջոցներ կարող են հատկացվել մարզպետի հայտերի հիման վրա: Փոխգործողությունները կազմակերպվում և իրականացվում են նախապես մշակված և ՀՀ ԱԻՆ ՓՕ կողմից հաստատված պլանների հիման վրա:

ՀՀ ԱԲՆ ՓԾ կողմից ստացված հրահանգներին համապատասխան մարզերը պատրաստակաՆության վիճակի են բերվում իրենց ենթակայության տակ գտնվող ուժերը և միջոցները ու կազմակերպում նրանց մուտքը Կոտայքի մարզի աղետի գոտի, ապահովելով նրանց անհրաժեշտ միջոցներով և սննդամթերքով աղետի գոտում մինչև 10 օր ինքնավար աշխատելու համար:

Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում փոխգործողության կարգով կարող են ընդգրկվել նաև մարզի ու հարակից տարածքի հասարակական փրկարարական ջոկատների և կամավորական միությունների անձնակազմերը: Առկա ուժերի ու միջոցների անբավարարության դեպքում մարզպետի հայտով ՓԾ տնօրենի որոշմամբ փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում կարող են ընդգրկվել նաև ՓԾ փրկարարական ստորաբաժանումները:

Փոխհամագործակցությունը կազմակերպվում է առաջին հերթին հիմնական խնդիրները (փրկարարական և արտակարգ իրավիճակի տեղայնացման աշխատանքներ) իրագործող կազմավորումների շահերից ելնելով:

Փոխգործողություններ կազմակերպելիս համաձայնեցվում է՝

- 1) տարածք (օբյեկտ) մուտք գործելու ժամանակ գործողությունների կարգը,
- 2) փրկարարական աշխատանքների իրականացմանը խանգարող հանգամանքների, խոչընդոտների վերացման կարգը,
- 3) տեղեկատվության փոխանակումը միմյանց միջև,
- 4) իրադրության բարդ պայմաններում փրկարարների գործելու կարգը,
- 5) կոմունալ-էներգետիկ համակարգի վթարների վերացման ժամանակ փրկարարների և տեղական կազմավորումների մասնագետների հետ փոխգործողության կարգը,
- 6) հերթափոխման ժամանակ գործողությունների կարգը,
- է) իրավիճակի կտրուկ փոփոխության, փրկարարի կյանքին անմիջական վտանգի դեպքում գործողության կարգը,
- 7) կապի և տեղեկատվության կարգը,
- 8) կառավարման կետերի տեղակայման վայրերը:

Ելնելով ստեղծված իրավիճակից առավել վնասված կազմակերպություններում փոխգործողության կարգով կարող են միմյանց տրամադրել փրկարարական և այլ կազմավորումներ ուժեր ու միջոցներ:

## **2. Իրավիճակի գնահատման արդյունքում այլընտրանքային մատակարարման կազմակերպում**

Կոմունալ - էներգետիկ ցանցերում խոշոր վթարի դեպքում հերթապահ դիսպետչերը անմիջապես օբյեկտում հայտարարում է տագնապ, զեկուցում է փաստի, տեղի և նրա զարգացման վերաբերյալ օբյեկտի ղեկավարությանը, արագ արձագանքում է մարզային ոստիկանություն, շտապ օգնության հերթապահներին և մարզային փրկարարական վարչություն, որտեղ տարվում է մշտական հերթապահություն:

Համայնքի (քաղաքի) ղեկավարությունը Կոտայքի մարզային փրկարարական վարչության դիսպետչերական կետ ներկայացնում է անհրաժեշտ տեղեկատվություն, կազմակերպում է ազդարարում, վտանգավոր, հնարավոր ավերումների շրջաններում գտնվող բնակչությանը ռադիոհանգույցի և շարժական ազդարարման միջոցներով, վթարի և վտանգի բնութագրի, պահպանության միջոցների, վարվեցողության կանոնների, անհրաժեշտության դեպքում տարահանման կարգի և կենսապահովման միջոցների վերաբերյալ:

Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետի ցուցումով հերթապահ դիսպետչերը կազմակերպում է արագ արձագանքման ուժերի ազդարարում և հավաք:

Վթարի օջախի ինժեներական և հրշեջ հետախուզությունները, հետագա իրավիճակի զարգացման գնահատումը անց են կացվում ինժեներական ծառայության մասնագետների կողմից, խոցման օջախի հետախուզությունը՝ տարածքային ինժեներաշինարարական և կոմունալ ծառայության, ԿՄՓՎ հրշեջ փրկարարական ջոկատների ուժերով և միջոցներով:

Մարզի ԱԻ հանձնաժողովի ղեկավարությունը իրավիճակի գնահատումից հետո, համաձայն ստույգ տվյալների, որոշում է ընդունում առաջնահերթ միջոցառումների անցկացման՝ բնակչության և գյուղատնտեսական կենդանիների պաշտպանության, նրանց կենսապահովման, նյութական արժեքների պահպանման, տուժածներին օգնություն ցուցաբերելու և վթարի մեկուսացման վերաբերյալ:

Մագիստրալ խողովակաշարի վթարի դեպքում հետախուզության խնդիրներն են՝

- 1) որոշել ավերածությունների սահմանները.
- 2) արտանետվող նյութի պարամետրերը
- 3) որոշել վթարի վայրից անվտանգ գոտու հեռավորությունը և խոցման շառավիղը
- 4) որոշել խողովակաշարերի սահմանները
- 5) որոշել տուժածների գտնվելու վայրը և նրանց վիճակը
- 6) արտանետվող նյութի տարածման ուղղությունը և արագություն

Վթարների մեկուսացման, չեզոքացման միջոցառումների իրականացումը սկսվում է նրանց հայտնաբերմամբ՝ հերթապահ ուժերով և միջոցներով: Պատրաստության բերման ընթացքում ներգրավվում են մնացած ուժերն ու միջոցները:

Վթարի վերացման և փրկարարական աշխատանքների վարման համար ներգրավում են մարզային կազմակերպությունների կազմավորումների ուժերն ու միջոցները:

Փրկարար և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների համար լրացուցիչ ներգրավում են կառուցվածքային ստորաբաժանումների բարձր պատրաստականության կազմավորումները:

Հիմնական ուժերը կենտրոնացվում են վթարի չեզոքացման և վերացման, նաև միաժամանակ օգնության կարիք ունեցող մարդկանց և կենդանիների փրկելու համար:

Բնակչության, գյուղատնտեսական կենդանիների, գյուղատնտեսական , արդյունաբերական և այլ օբյեկտների պաշտպանության հիմնական միջոցառումներն են՝

- 1) վնասվածներին տարահանում և բժշկական օգնության ցուցաբերում
- 2) վթարային շինություններից, կրակի հնարավոր տարածման գոտուց բնակչության տարահանումը և նրանց տեղավորումը նախապատրաստված շինություններում
- 3) առաջնահերթ մարվում են ՓԱՎ աշխատանքներին խանգարող և տարածման վտանգ առաջացնող հրդեհների օջախները
- 4) փրկված շենքերից, շինություններից տուժածներին հանել
- 5) գյուղատնտեսական անասունների և նյութական արժեքների հանումը հրդեհի և գազի հնարավոր տարածման շրջանից:

### **Ջրամատակարարում**

Ջրամբարները, մաքրման կայանները վնասվում են ոչ շատ հաճախ, սակայն ջրամատակարարման ոլորտում առավել հաճախ վթարները տեղի են ունենում բաժանման ցանցերում, պոմպակայաններում և ճնշման կայաններում: Ջրամատակարարումը դադարեցվում է ոչ միայն ինչ որ խողովակի վթարի պատճառով, այլ էլեկտրաէներգիայի անջատման հետևանքով, իսկ ինչպես միջտ պահեստային էլեկտրամատակարարումը բացակայում է: Ստորգետնյա խողովակաշարերը շարքից դուրս են գալիս երկրաշարժերի, սողանքների և ավելի հաճախ կոռոզիայի հետևանքով: Առավել խոցելի մասերը խողովակաշարերի շենքերի մոտքերի մոտի միացումներն են: Ջրային համակարգի աշխատանքի կայունությունը պայմանավորվում է նրանով, որպեսզի բոլոր պայմաններում կարողանա մատակարարի անհրաժեշտ քանակությամբ ջուր, դրա համար պետք է վերագինել որոշակի քանակությամբ միացնող և անջատող սարքերով, հնարավորություն տալով անխափան ջրի մատակարարումը խողովակաշարերով շրջանցելով ընթացիկ վնասները: Ձեռնարկությունների ջրամատակարարման բարելավման ուղիներից առաջնայինը հանդիսանում է բաց տարածություններում արհեստական ջրամբարների շինարարությունը, որտեղից էլ հնարավորություն է ստեղծում ջրի հոսքի մատակարարումը ձեռնարկություն: Ստեղծվում է շուրջօրյա դիսպետչերական ծառայություն, որը կապ է հաստատում ջրատարի և կոյուղու

վթարների վերացման բրիգադաների հետ, հնարավոր են ջրի որակի շեղումներ: Ուժեղացվում է ջրի որակի հսկողությունը ջրատարներում, ջրամբարներում և ներքին ցանցում, որն իրականացվում է ձեռնարկության ջրի որակի վերահսկման բաժնի և մարզային հիգիենիկ հսկողության տեսչության հետ՝ ապահովելով քլորակայանների և ամբողջ համակարգի նորմալ աշխատանքը: Այն բնակավայրերը կամ թաղամասերը, որի սնուցում կատարվում է վթարված ջրատարից, ջրամատակարարումն ապահովվում է փոխարինող ջրատարից, իսկ դրա անհնարինության դեպքում ջրամատակարարումն ժամանակավորապես ապահովվում է ջրատար մեքենաներով: Անհրաժեշտության դեպքում ավելացվում է ջրկիր մեքենաների քանակը:

### **Էներգամատակարարում**

Էլեկտրասնուցման կայունության բարձրացումը ունի մի շարք ձևեր՝

- 1) Ձեռնարկության, հաստատության, բնակելի հատվածի էներգամատակարարումը երկու ուղղություններով՝ անկախ էներգիայի աղբյուրներից: Դա զգալիորեն մեծացնում է հուսալիությունը, քանի որ միաժամանակյա ձախողումը երկու հզորության փոխանցման գծերի քիչ հավանական է:
- 2) Օդային գծերի փոխարինումը ստորգետնյա մալուխների.
- 3) Ստեղծել անկախ էներգետիկ աղբյուրների առաջնահերթ էլեկտրաէներգիայի մատակարարման շարունակական ցիկլ՝, գործարանների, ջրամատակարարման կայանների, կաթսայատների, բժշկական և այլ հաստատությունների համար:

### **Գազամատակարարում**

Գազամատակարարման համակարգում հատկապես մեծ վտանգավորություն են ներկայացնում փլուզումները, սողերը գազատարների վրա, բնակելի հատվածների բաշխման ցանցերում և արդյունաբերական օբյեկտներում, իսկ վթարներ կոմպրեսորային և գազակարգավորիչ կայաններում լինում են, բայց ոչ հաճախ: Գազատարների երկարամաշվածությունը, հողի դեֆորմացիայի և շարժի հետևանքով վթարները սովորական բնույթ են կրում, դրանց վերացման համար կապիտալ ներդրումներ են անհրաժեշտ:

Բնական գազի մատակարարման անխուսափելի սահմանափակումների հանգեցնող պայմաններում գազամատակարարման առաջնահերթություններից օգտվելու իրավունք ունեն՝

- 1) Բնակչության սպասարկման ոլորտում գործող առաջնահերթ ձեռնարկությունները.
- 2) Մարզում գործող հիվանդանոցներն ու բուժ. հիմնարկները.
- 3) Մարզում գործող խմելու և ոռոգման ջրի անխափան մատակարարումն ապահովող ենթակառուցվածքները.
- 4) Տարածքում գործող հիմնական և ավագ դպրոցները, ինտերնատները, մանկատները, նախադպրոցական կրթական հիմնարկները.

### **Տրանսպորտ**

Արտակարգ իրավիճակներում օպերատիվ կարգով պոտենցիալ վտանգավոր օբյեկտների իրավիճակի գնահատման ժամանակակից կատարելագործման մեթոդների ներդրման, վտանգավոր բեռների տեղափոխման, տուժվածների հետազննման, հայտնաբերման, տեղափոխման և առաջին բուժօգնության խնդիրները լուծելու նպատակով նախատեսվում է՝

- 1) առավելագույն չափով ապահովել քաղաքների ու բնակավայրերի խիստ բնակեցված թաղամասերում տրանսպորտային միջոցների և հողափոր մեքենաների անցողունակությունը.
- 2) խոշոր քաղաքներում լուծել շրջանցումային ճանապարհների նախագծման և իրականացման հարցերը.
- 3) ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղիներում ապահովել խոշոր կառուցվածքների տեխնիկական անվտանգությունը (թունելներ, կամուրջներ).
- 4) ձեռնարկել միջոցներ ճանապարհների այլ տարբերակի բացակայության դեպքում արտակարգ իրավիճակներում ապահովելու բնակչության անվտանգությունը, փրկարարական ու վթարավերականգնողական աշխատանքների անխափան գործընթացը:

### 3. Բնակչությանը անհրաժեշտ միջոցներով ժամանակավոր ապահովման կազմակերպում (դիտարկել նաև տարահանում)

Կոմունալ - էներգետիկ ցանցերում խոշոր վթարի դեպքում օպերատիվ ղեկավարման շտաբի պետի կարգադրությամբ նախապատրաստվում են համապատասխան ղեկավարման կետեր, որոնցում կազմակերպվում է շուրջօրյա հերթապահություն պատասխանատու անձերից, ճշգրտվում է մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների և մարզի կազմակերպությունների խնդիրները: Այդ ժամանակահատվածում կատարվում են հետևյալ միջոցառումները՝

1) աղետի վտանգի մասին տվյալները հաղորդվում են մարզի ԱԻ հանձնաժողովի ենթակա շտաբներին, հիմնարկություններին և բնակչությանը:

2) ուժեղացվում են դիտարկումները և կազմակերպվում է հետախուզություն հավանական վտանգավոր շրջաններում:

3) նախապատրաստվում և իրականացվում է բնակչության նախնական տարահանում հավանական վտանգավոր գոտիներից, դուրս են հանվում նյութական արժեքները:

4) մասնակի կամ լրիվ դադարեցվում է այն հիմնարկ - ձեռնարկությունների աշխատանքները, որոնք գտնվում են հավանական վտանգավոր գոտիներում:

Տեղադրվում և պահպանվում է կապը ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերի, ռստիկանության և ազգային անվտանգության ծառայությունների միավորումների հետ, որոնք համաձայն համագործակցության պլանի հատկացնում են օգնական ուժեր:

Կոմունալ - էներգետիկ ցանցերի օբյեկտներին սպառնացող կամ նրանցում առաջացած վթարների դեպքում բնակչության ազդարարումը կատարվում է օբյեկտի կապի հանգույցի հերթապահ դիսպետչերի միջոցով: Օբյեկտի աշխատակազմի և մոտակա ապրող բնակչությանը ազդարարվում է տեղական համակարգի միջոցով: Գործում է էլեկտրոշակներ, ռադիոցանցով իրադրությունը հաղորդվում է բնակչությանը : Օդերևութաբանական ծառայությունը ճշտում է քամու ուղղությունը, եղանակային պայմանները մյուս տվյալները և հայտնում մարզի ԱԻ հանձնաժողովի շտաբ, ճշգրտվում են վթարի հետևանքների վերացման պլանները:

Կոմունալ - էներգետիկ ցանցերի խոշոր արտադրական վթարների հետևանքները վերացնելիս օգտագործվում է մեծ քանակությամբ ժամանակակից տեխնիկա: Նման պայմաններում տեխնիկայի շահագործումը բնութագրվում է մի շարք առանձնահատկություններով՝ ճանապարհաշինական, հրդեհային, հողափոր և բեռնամբարձիչ տեխնիկայի մոտոռետուրսների ծախսերի ավելացում, աշխատանքների շրջանում օդի մեծ փոշոտվածություն, որի հետևանքով էլ սահմանափակվում է տեսանելիություն վարորդների համար, բարձր ջերմային ռեժիմը, օդամատակարարման սխտեմի գերտաքացման հնարավորությունը:

Մրանց դեմ պայքարելու համար հարկավոր է մեքենաների խմբի հետ ունենալ ջրավազող կամ հրշեջ մեքենաներ, որոնք անհրաժեշտ են աշխատավայրերը ջրելու համար:

Տարահանման հանձնաժողովից ստանալով համապատասխան տվյալներ՝ տարահանվող բնակչության վերաբերյալ, վերոնշյալ ծառայությունը ստեղծում է բնակչության ժամանակավոր կացարաններին կից շարժական բաշխման կետեր: Անհրաժեշտ սննդամթերքը, հագուստը, առաջին անհրաժեշտության ապրանքները պետական պահուստից, սննդի և առևտրի խոշոր կազմակերպություններից այլ ծառայությունների հետ համատեղ կազմակերպում են նյութական միջոցների կուտակումը, տեղափոխումը, պահպանումը և բաշխումը համապատասխան մարզային շարժական կետերում:

Մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների տրանսպորտային ծառայությունը տրամադրում է անհրաժեշտ քանակի բեռնատար, սառնարանային ավտոտրանսպորտ և ավտոբենզատարներ, համապատասխան քանակը չբավականացնելու դեպքում մարզպետի կողմից ներկայացվում է հայտ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն՝ տրանսպորտային միջոցառումների ապահովման համար:

Կոմունալ - էներգետիկ ցանցերի խոշոր վթարից տուժած բնակչության և փրկարարական ուժերի կենսապահովման համար անհրաժեշտ է կազմակերպել սննդի և առաջին անհրաժեշտության միջոցների ժամանակին տեղափոխումը և բաշխումը:

#### 4. Վթարավերականգնողական աշխատանքներ

Կոմունալ - էներգետիկ ցանցերի խոշոր վթարների հետևանքների վերացման վթարավերականգնողական և անհետաձգելի այլ աշխատանքների կազմի մեջ մտնում են.

- 1) վթարի հետևանքների տեղայնացումը և վերացումը.
- 2) տուժածների փնտրումը, նրանց բժշկական օգնության ցուցաբերումը և տեղափոխումը բուժօգնության կայաններ.
- 3) վթարի հետևանքների վերացումը:

Վթարավերականգնողական միջոցառումների համալիրը սերտորեն կապված է անհետաձգելի միջոցառումների հետ, որոնք սկսվում են միաժամանակ և կատարվում են զուգահեռաբար, շատ հաճախ նույն ուժերի կողմից: Դրա համար էլ վթարի հետևանքների վերացման միջոցառումների կատարման ամբողջ համալիրի բաժանումը տարբեր փուլերի, շատ պայմանական է: Վթարի առաջացումից անմիջապես հետո, օբյեկտում միջոցներ են ձեռնարկվում վթարի հետագա զարգացում թույլ չտալու համար՝ օբյեկտի անձնակազմի միջոցով կատարելով հետևյալ միջոցառումները՝

ա. Գործի են դրվում ավտոմատ փականների և վթարների տեղափակման ավտոմատ համակարգերը.

բ. Սկսվում է արտադրության անվթար կանգնեցման աշխատանքները: Վտանգի աղբյուրի տեղափակման աշխատանքներն իրենց մեջ ամփոփում են՝

ա. Վնասված սարքավորման վերանորոգումը (անցքերի փակում, հերմետիկացում և այլն).

բ. Վթարային տեղամասում հրակայուն նյութերի թափված տեղի տեղափակումը, որսիչների պատրաստումը.

գ. Թափված նյութերի հավաքումը ռեզերվային փակ տարողությունների մեջ.

դ. Տարբեր տեխնիկական համակարգերի վնասվածքների վերացումը, որոնք կարող են առաջ բերել վտանգի այլ գործոններ (պայթույթներ, հրդեհներ, փլուզումներ, հեղեղումներ և այլն).

ե. Հրդեհների մարումը, եթե դրանք առաջացել են.

Վթարի աղբյուրի տեղափակման հիմնական աշխատանքները կատարվում են տվյալ օբյեկտի մասնագետների ղեկավարության տակ՝ զագափրկարարական ծառայության և վթարի առաջացման տեղամասի սպասարկվող անձնակազմի ուժերով, որոնք ուսուցում անցած և համապատասխան սարքավորումներով, գործիքներով և պաշտպանության միջոցներով ապահովված մասնագետներ են:

1) Դիտահորերում, հորերում, ամբարներում և նման այլ տեղերում զագավտանգ աշխատանքներ կատարող բանվորները և ինժեներատեխնիկական աշխատողները, պետք է լինեն առանց մետաղական կրունկների ու մեխերի կոշիկներով, հակառակ դեպքում կոշիկի վրա պետք է հագնել ռետինե կրկնակոշիկներ կամ աշխատատեղում փռել մեկուսիչ գորգեր (փաթեթավոր նյութեր):

2) Բոլոր բանվորները պետք է ապահովվեն կատարվող տվյալ բնույթի զագավտանգ աշխատանքներին համապատասխանող անհրաժեշտ պաշտպանիչ միջոցներով և հարմարանքներով: Անհատական պաշտպանության միջոցները պետք է ստուգվեն և փորձարկվեն:

3) Գագավտանգ աշխատանքներ կատարող յուրաքանչյուր բանվոր, այդ թվում բրիգադի ղեկավարը, պետք է ունենան ճկափողային կամ մեկուսացված (թթվածնային բալոնով) հակազագ: Զտող հակազագերի օգտագործումը չի թույլատրվում:

4) Ստորգետնյա վնասված գագատարների վրա ցանկացած տեսակի աշխատանքներ կատարելիս պետք է ձեռնարկվեն միջոցներ՝ արտահոսող գազի բռնկումը բացառելու համար: Եթե հողային աշխատանքներ կատարելիս առաջացել է գազից թունավորվելու կամ շնչահեղձ լինելու վտանգ, աշխատանքները պետք է շարունակել հակազագերով:

5) Էլեկտրասարքերի միացումն առանց խրոցակի և վարդակի արգելվում է:

6) Գազալցված միջավայրում աշխատելիս պետք է կիրառվեն տեղափոխվող պայթուցապաշտպան էլեկտրալամպեր: Այդպիսի էլեկտրալամպերի միացումը էլեկտրացանցին պետք է կատարվի գազալցված միջավայրից դուրս:

7) Էլեկտրասարքերի բռնակները և նրանց սնող լարերի մուտքագծերը պետք է ունենան ապահով և սարքին մեկուսացում, որի վիճակը պետք է ստուգել գործիքը աշխատողին տալուց առաջ:

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՄՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ  
Փ/Ծ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ